



«ԽԱՂԱՂՈՅԱՆ ՈՒԺ»
նկարչական մրցույթի հայտարարություն

Միբելի՛ ուսուցիչներ և դպրոցականներ, «Կանայք հանուն զարգացման» հասարակական կազմակերպությունը (ԿՀԶ ՀԿ) հայտարարում է խաղաղության թեմայով նկարների 3-րդ համահայկական մրցույթը՝ **«Խաղաղության ուժը»** խորագրով:

Հավատարիմ մնալով կազմակերպության գործունեությանն ու որդեգրած սկզբունքին, ինչպես նախորդ երկու մրցույթների, այնպես էլ այս տարվա մրցույթի հիմքում ընկած է խաղաղության ու համերաշխության գաղափարը:

Մրցույթի հիմնական նպատակն է մեկ անգամ ևս դպրոցականների ուշադրությունը սևեռել խաղաղության, սիրո, համերաշխության ու հանդուրժողականության վեհ գաղափարների վրա և ցույց տալ բոլորին ոչ թե բռնի, այլ սիրո և ճշմարտության ճանապարհով դրական արդյունքի հասնելու ուժը, մեկ անգամ ևս ապացուցել, որ ցանկացած կոնֆլիկտ հնարավոր է լուծել խաղաղ ճանապարհով:

Մրցույթը բաց է՝

Հայաստանի բոլոր մարզերի դպրոցականների 2 տարիքային խմբերի համար /7-11 և 12-17 տարեկան աշակերտներ/:

Մրցանակներ՝

Տարիքային տարբեր խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած 6 մասնակիցներին սպասվում են հատուկ մրցանակներ:

Առաջին մրցանակների արժանացած 2 մասնակիցների նկարների հիման վրա կտպագրվեն բացիկներ, որոնք կտարածվեն Հայաստանում և արտերկրում:

Մրցութային հանձնաժողովի կողմից կընտրվեն 50 լավագույն նկարներ, որոնք մրցանակային տեղեր զբաղեցրած նկարների հետ միասին կցուցադրվեն Խաղաղության միջազգային օրվան՝ Սեպտեմբերի 21-ին նվիրված ցուցահանդեսի ժամանակ:

Լավագույն նկարների հեղինակները կմասնակցեն ցուցահանդեսի բացման հանդիսավոր միջոցառմանը և կստանան մրցույթի մասնակցության վկայականներ:

Միջոցառումը կլուսաբանվի տեղական ՋԼՄ-ներով: Ընտրված լավագույն նկարները կտեղադրվեն ԿՀԶ ՀԿ ինտերնետային կայք էջում և ֆեյսբուք էջում՝ www.wfd.am, “Women for Development NGO”):

Մրցույթին մասնակցած բոլոր նկարները դառնում են ԿՀԶ ՀԿ-ի սեփականությունը: Կազմակերպությանն իրավունք է վերապահվում ցուցադրելու նկարները տարբեր երկրներում, օգտագործելու դրանք իր կողմից հրատարակվող ձեռնարկներում, ամսագրերում կամ այլ հրատարակություններում՝ պահպանելով հեղինակային իրավունքները:

Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են 2018թ. մայիսի 10-ից մինչև հունիսի 15-ը:

Միբեյի դպրոցականներ, եկե՛ք մեր նկարներով ցույց տանք, որ Խաղաղությունը գերագույն արժեք է ողջ մարդկության համար, որ միայն խաղաղության պայմաններում է հնարավոր կայուն, արդար ու ամուր ապագայի կառուցումը, այն ապագայի, որը մենք ենք ուզում:

Մրցույթին մասնակցելու պայմանները՝

Ժամկետներ

Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են **2018թ. մայիսի 10-ից մինչև հունիսի 15-ը**: Մրցույթին մասնակցող բոլոր նկարների բնօրինակները պետք է ուղարկվեն «Կանայք հանուն զարգացման» ՀԿ գրասենյակ՝ մինչև **ա/թ հունիսի 15-ը**: Նշված ժամկետից ուշ ուղարկված նկարները չեն մասնակցի մրցույթին (փոստային կնիքը ծրարի վրա պետք է լինի ամենաուշը **հունիսի 15-ի նշագրումով**):

Գրասենյակի հասցեն է՝ ՀՀ ք. Գյումրի 3118, Շահինյան 6ա, բն. 16:
Հեռախոսներ՝ 0312 33007, 091 197233, 093 390872:

Ո՞վ կարող է մասնակցել

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի բոլոր մարզերի դպրոցականները երկու տարիքային խմբով՝ 7-11 և 12-17 տարեկաններ:

Մրցույթի կանոնները

1. Մրցույթին պետք է ներկայացնել A3 չափի ստվարաթղի վրա (հորիզոնական կամ ուղղահայաց) ձեռքով արված նկար, որը կարտահայտի մրցույթի խորագիրը՝ «Խաղաղության ուժը»: Մրցույթին կարելի է ներկայացնել ցանկացած տիպի նկար՝ գծանկար, յուղանկար, գունավոր մատիտներով, ակվարելով կամ ջրաներկով և այլն: Համակարգչային գրաֆիկա պարունակող կամ համակարգչով արված նկարները չեն մասնակցի մրցույթին: Յուրաքանչյուր մասնակից մրցույթին կարող է ներկայացնել միայն 1 նկար:
2. Նկարի հետևում պետք է գրված լինի մասնակցի անունը, ազգանունը, տարիքն ու դպրոցը:
3. Նկարը պետք է նախկինում որևէ մրցանակի արժանացած չլինի և պատկանի մասնակցողին:
4. Նկարի հետ պետք է ուղարկել նաև մրցույթի մասնակցի կողմից լրացված հայտը: (հայտը կարող է լրացնել նաև պատասխանատու ուսուցիչը/դասուցիչը և եթե տվյալ դպրոցից մասնակցում են մի քանի աշակերտներ, կարող եք բոլորի նկարները միասին մեկ փաթեթով ուղարկել գրասենյակ)

Հետադարձ կապ:

Կանայք հանուն զարգացման ՀԿ
ք. Գյումրի 3118
Շահինյան 6ա, բն. 16
Հեռ./Ֆաքս: 0312 33007
Էլ. Կայք www.wfd.am
Ֆեյսբուք էջ: “Women For Development” NGO

Ծրագրի պատասխանատուներ՝
Սուսաննա Ղազարյան 093 390872
Մարինա Ջուհարյան՝ 091 197233

Մասնակցության հայտ

1.	Աշակերտի անուն, ազգանուն, տարիքը	
2.	Մարզ, քաղաք/գյուղ	
3.	Դպրոց, դասարան,	
4.	Դպրոցի հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը	
5.	Պատասխանատու ուսուցչի կամ դասղեկի անուն, ազգանունը և կոնտակտային տվյալները (հեռ., էլ. հասցե)	
6.	Նկարի բնութագիրը (խնդրում ենք համառոտ նկարագրել, թե մասնակիցն ինչ է ցանկացել ասել կամ ինչ ուղերձ է հղել իր ստեղ- ծագործության միջոցով)	